

ՆՈՐ ՀԲԱՅԱԲԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՀԱԹՐԵԱՆ (Աւետիս)։ Հին Հայոց տաղաւաքական արուեստ, քննական տեսութիւն։ Շուշի, Միրզալան մահմետի Յակոբեանցի տպարանում։ (136 էջ, գին 50 կոպ)։

ԳԱՔՐԻԷԼԵԱՆ Մ. Ս.։ Արուեստ Առեւտրականութեան, ի պէտս աղգային վարժարանաց, Նիւ Ետրք, տպարան Մ. Ս. Կարբիէլեան, 1891։ (128 էջ, 80 մեծ. գին 5 Ֆռանք)։ Նիւթին նորութեամբ և հիւսուածքով մտադրութեան և ընդունելութեան արժանաւոր երկատիրութիւն։

ԳԱՅԹԱՆ (Հ. Պաւլոս Վ.)։ Նոր Տարրաբանութիւն, ի պէտս աղգային վարժարանաց, յերկուս հատորս։ Վենետիկ ի Ս. Ղազար, 1891։

— Հատոր Ա. Անդործարանաւոր Տարրաբանութիւն։ (248 էջ, ի 80 փոքր)։

— Հատոր Բ. Գործարանաւոր Տարրաբանութիւն։ (145 էջ, ինի երկու հատորին Ֆռանք 4)։

ԳԱԻԹԵԱՆ (Օմրա)։ Տարրական Քերականութիւն արդի հայերէնի, ի պէտս նախնական կարգաց։ Վաւերացեալ յՈւսումնական խորհրդոյ աղգային կեդրոնական Վարչութեան։ Կ. պոլիս, տպագր. Ն. Ճ. Արամեան, 1891։ (28 էջ, գին 2 դր)։

ԵՂԻՇԷԻ պատմութիւնը Վարդանի և Հայոց պատերազմի համար։ Թարգմանեց Հ. Ղուկասեան։ Թիֆլիզ, տպ. Արոր Տ. Նազարեանի, 1891։ (1-6, 259. ծանօթութիւնք, էջ 15։ Գինն է 60 կոպէկ)։

ՂԱՐԱԳԻՕՋԵԱՆՑ (Յար)։ Կնոջ կաշումը և գրութիւնը հասարակութեան մէջ։ Թիֆլիզ, տպ. Արոր Տ. Նազարեանի, 1891։ (31 էջ, գին 10 կոպ)։

ՆԵՄԵՍԻՈՍԻ փիլիսոփայի Եղեանցաւ Յաղպա բնութեան մարդոյ։ Ի կարդի Մատենադրութեանց նախնեաց, բաղգատութեամբ ընդ յունին և ծանօթութեամբք, Վենետիկ, ի տպարանի Մխիթարեանց, հրատարակեալ ի 1891 ամի։ (164 էջ ի 80 մեծ. գին 5 Ֆռանք)։

ՈՒՂՈՒՐԼՈՒԻԱՆ (Գեոր. Մեսրոպ Վ.)։ Պատմութիւն Հայոց գաղթականութեան, և շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիվոնոյ քաղաքի։ Հանգերձ յաւելումովք, Աղգային նոր պատմութեան համար հետաքննական երկատիրութիւն մը, հանդերձ համառօտ տեղեկութեամբք հայկական գաղթականութեանց ի զանազան քաղաքս իտալիոյ։ Վենետիկ, ի տպ. Մխիթարեանց, 1891։ (320 էջք, 80 մեծ. գինն 5 Ֆռանք)։